

դուզն եւ անկիրթ մէկը լրբարար իր կողմէ բաներ մը գրեց եւ Փաւստոսի անունով քշել ուղեց, թէ եւ այս բանը յայտնի ցոյց կու տայ բոլոր քննողներու, քանզի յայտնեալ մէջ կան անանկ մարդիկ, մանաւանդ ասորիներու մէջ»⁽¹⁶⁾ :

Քանզի յայտնու մէջ անանկ մարդիկ կան... Ո՛րքան պերճախօս է :

Եթէ Փարպեցիի կարգացած Փաւստոսը հայերէն ըլլար, այդ ալ գրուած հայերէնաւոր հայէ մը, Մեսրոպի ալ աշակերտ, Փարպեցիի ալ ժամանակակից, 470ին, ինչպէս Մալխասեան կ'ըսէ, ի՞նչ տրամաբանութեամբ Փարպեցիին յոյն հարազործի մասին պիտի գրէ : Յոյն գեղծարարը յունարէն գրքի մէջ յունարէն պիտի մտցնէ իր յերկրածը, Ասորիին ալ ասորերէն : Փարպեցիի պէս ուսումնական մէկը նման արտաոց տող պիտի չգրէր եթէ իր ունեցած Փաւստոսը հայու գործ եւ հայերէն ըլլար :

Իր այդ գրածէն միայն երկու եզրակացութիւն կարելի է : Առաջին, Փարպեցիի ունեցած օրինակը յունարէն գրուած էր : Երկրորդ, եթէ յունարէն չէր, ապա ուրեմն սկզբնաղբ յունարէնէն հայերէնի թարգմանուած էր : Կա՞յ մէկը, որ ասկէ տարբեր եզրակացութեան յանգի Փարպեցիի վերոյիշեալ վկայութենէն : Եթէ կայ այդպիսին եւ հրապարակէ իր եզրակացութիւնը, գոնէ մէկ անձ իրեն երախտապարտ պիտի ըլլայ — ես :

7.

Այս բոլոր բաժնեբէտ կ'եզրակացնեմ, թէ Փաւստոս Չորրորդ գարու հեղինակ է, եւ գրեց իր գիրքը 390-400 թիւերուն, յունարէն լեզուով : Ան հայ էր, հաւանաբար ուսած Հայաստանի արեւմտեան մասին Ներսէսի հաստատած մէկ գպրոցին մէջ, կամ Կեսարիա : Թերեւս ալ նոյնիակ Պոլիս, ուր շատ մը հայ ուսումնասէններ իրտասարդներ կ'երթային :

Զինք Բիւզանդական հոգաժառի բնակիչ համարելու պատճառն է իր ծանօթութիւնը կարգ մը դէպքերու, որ արեւմուտքի մէջ աւելի պատահութիւն ունէր

իմանալու : Օրինակ, Պապ Թագաւորի սպանութիւնը : Փաւստոսի նկարագրութիւնը յար եւ նման է Ամմիանոս Մարկելիանոսի հաւատարմութեան եւ յուզիչ նկարագրութեան : Մինչդեռ այդ սպանութեան մանրամասնութիւնը Հայաստանի մէջ ծանօթ ըլլալու չէ, որ Խորենացիին բոլորովին տարբեր — եւ անճիշտ — պատմութիւն մը կ'ընէ Պապի սպանման մասին :

Ուրիշ օրինակ : Յովիանոս Կայսեր եւ Շապուհի միջեւ կնքուած դաշինքի պայմաններուն ծանօթ է Փաւստոս, որ Ամմիանոսի պատմածին հետ կը համաձայնի, եւ զոր Խորենացիին չի գիտեր :

Ապա օտար անձերու պատահած դէպքերը, զոր Փաւստոս հայու կը վերագրէ : Նման վերագրում ընելէ առաջ բնականաբար ան իմացած ըլլալու էր ճշգրիտ պատմութիւնը, եւ այդ կրնար եթէ ապրած ըլլար Բիւզանդական հողի վրայ : Օրինակ, Ներսէս կը մերժէ աղօթել Արիոսեան վաղէս Կայսեր հիւանդ դաւիին համար : Այս կը վերաբերի Բարսեղ Կեսարացիի եւ պատմուած է Սոկրատի Եկեղեցական պատմութեան մէջ : Կամ, Ներսէսի ձեռնադրութեան ատեն աղանձին Բարսեղի վրայէն վերնալով կը հանդէս Ներսէսի վրայ : Այս պատմութիւնը Եւսերիոս կուտայ Փարիանոսի մը մասին որ Հոմի Եպիսկոպոս կ'ըլլայ :

Այս Բիւզանդահայու յունարէն լեզուով 390-400ին գրած պատմութիւնը, տարիներ վերջ, Ե. գարու վերջին, կամ Զ. գարու սկզբին հայերէնի կը թարգմանուի հայու մը կողմէ, որ «Իւրատեսակ հայ հայրենասիրութեամբ տողորուած» — Մանուկ Արեւելանի բառերով — ըստ իւր նախասիրութեանց փոփոխութիւններ մտցնելով «կը ճոխացնէ» բնաղբը* :

ՀՐԱՆԴ Բ. ԱՐՄԵՆ

16 Նոյն, էջ 11-12 :

*) Յարգոյ Հեղինակին ուշադրութեան վրիպած է, անշուշտ, Փ. Բիւզանդի պատմութեան հայերէն լեզուի հարցը : Արդարեւ, լեզուական տեսակետէն, հեղինակաւոր ուսումնասէրներու գնորտեան համաձայն, այդ գիրքը, կամ գոնէ ատոր հայերէն խմբագրական քարգմանութիւնը 420-440ի շրջաններուն միայն կարելի է վերագրել : Ծանօթ. Խմբ. :

Գ. Լ. ՈՒԽԱՆՔ.

ՍԵԼՃՈՒՔԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԵԾ ԱՐՇԱԽԸ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1962, ք. 6-8, էջ 137)

Ալի-Ասլանի գահակալութիւնը — Արշաւ վրաստանի դէմ — Արարատեան դաշտի ասպատակում — Անի քաղաքին պաշարումը — Անիի առումը — Անիի կոտորածը — Անիի աւերումը — Գագիկ Արաբսեանի ֆարտաքին քաղաքականութեան — Հայաստանի քաղաքականութեան — Խաչիկ Կաթ.ի մահը — Ընտրութեան արգելք :

Ա.Լ.Փ-Ա.Ս.ԱՆԻ Գ.Ա.ՀԱՅԱՆԱՆԻ ԴԻԻԱՆԵՆԸ

Ժիշտ այն ժամանակ, երբ յունական փոխ վրէժի «Երեւոյթներ» փրկող պատերազմներ կը մղուէին Սելճուքեան թուրքերու դէմ, անդին՝ Պարսկաստանի մէջ՝ կը մեռնէր անոնց աշխարհակալ պետը, Սուլթան Տուղըլ. եւ անոր կը յաջորդէր, վրացի պատմագիր Ջուանչէրի ջորդէր, վրացի պատմագիր Ջուանչէրի համաձայն՝ անոր որդին⁽¹⁾ . Իսկ Մ. Ուսահայեցիին համաձայն՝ անոր եղբայրը⁽²⁾ , կամ ըստ վարդան պատմիչի՝ հօրեղբոր որդին Ալի-Ասլան⁽³⁾ , զոր օտար պատմագիրներ կը կոչեն Ալիֆ-Ասլան կամ մագիրներ կը կոչեն Ալիֆ-Ասլան կամ Ալիֆ-Հասան (1063-1072) : Թուրքերը իրենց նոր վիճակաւոր ողջունեցին խանդավառութեամբ, որովհետեւ անիկա հզօր եւ ահարկու մարդ, աւելի անաղորոյն էր եւ պատերազմասէր քան Տուղըլ-Բէկ. որով անիկա իրենց պիտի ներշնչէր աւելի ոյժ եւ զօրութիւն, իրենց բարբարոսական բռնադրութիւնը դէպի նոր երկիրներ առաջնորդելու. եւ արդարեւ, Սելճուքեան արքունիքին մէջ սկսան նորանոր թակարդներ լա-

րուիլ նաեւ Հայաստանի սահմանակից երկրներու դէմ, որոնք մինչեւ այդ օրը կրած չէին Սելճուքեան բարբարոս զօրութեան հարուածները : Ալի-Ասլան ծրագրեց արշաւ մը, ուղղուած նախ Անդրկովկասեան երկիրներու դէմ եւ ապա Հայաստանի դէմ, մինչ տակաւին այդ երկրները տեսած չէին սելճուքեան սալամարակ ձիերու տարածած սարսափները :

Դիտելի է որ, ինչպէս սուլթան Տուղըլին, նոյնպէս սուլթան Ալի-Ասլանի արշաւանքներուն գլխաւոր նպատակը եղաւ Յոյները վռնտել Հայաստանի եւ Անդրկովկասի երկիրներէն, բանալու համար ճամբան դէպի Փոքր Ասիոյ ընդարձակ, խոտաւէտ եւ բերրի դաշտերը, որոնց գեղեցկութիւնը զիրենք արդէն հրապուրէր էր :

ԱՐՇԱԽ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Ալի-Ասլան մեծ զօրածուցով մը ըրաւ, զորոյակի տակ կանչելով Թուրքերը, Պարսիկները, Խուժաստանի եւ Ատրպատականի ազգերը⁽⁴⁾ , մէկ խօսքով Սելճուքեան թուրքեան բոլոր ոյժերը : Իր գահակալութեան երկրորդ տարին, 1064ին, Ալի-Ասլան մեկնեցաւ Ատրպատականի Մարանդ գաւառէն, Նախիջեւանի քովէն, նաւերու կամուրջով մը կտրեց անցաւ Եւրոպական Ս. Ուսահայեցիին վառ գոյնէրով կը նկարագրէ Սելճուքեան բանակին մուտքը հայկական հողին վրայ, «Շարժեալ մեծաւ ցատամբ եւ անագին բազ-

1 Հմմտ. Ջուանչէրի, Համառոտ պատմութիւն Վրաց, Վենետ. 1884, ԳԼ ԺԷ, էջ 113 :
2 Հմմտ. Մ. Ուսահայեցի, Պատմ. Բ. 173 :
3 Հմմտ. վարդան վր. պատմիչ, «Հաւաքումն պատմութեան», Վենետ. 1865 :
4 Հմմտ. Մ. Ուսահայեցի, Բ. 173 :

մութեամբ ծփայր չարեօք ալեօք, եւ խաղայր որպէս գգեստ յարուցեալս մարկաբեր բարկութեամբ, եւ որպէս գգազան արիւնարբութեամբ գայրացեալ, եւ գայր հասանէր ի Հայաստան աշխարհս... եւ մտանէր յաշխարհն Աղուանից»⁽⁵⁾ :

Նախնիներն քով, Արի-Ասլան իր բանակը երկուքի բաժնեց. ինքը մեծագոյն բանակով ուղղուեցաւ դէպի Վրաստան, մինչդեռ երկրորդ բանակին հրամանատար եւ առաջնորդ կարգեց իր որդին՝ Մելիք Շահ, այդ ատեն դեռ մանուկ մը, եւ իր հոգակաւոր նախարարը՝ որ էր Նիդամ Ալ-Մելիք, որոնք պիտի յարձակէին բիւզանդական սահմանադրութիւն զանազան բերդերուն վրայ:

Արի-Ասլան բարձրացաւ հայկական Գուգարք, եւ հսկայ շրջան ընելով իջաւ Տայք. քիչ մնացեր էր, որ իր բանակին առաջապահ հեծելազօրքը գերի բռնէին Վրաստանի Բագրատ Գ. Թագաւորը, եթէ ասիկա չփախչէր դէպի հիւսիս մինչեւ Քարթլի երկիրը: Յետ այդ վայրերուն ժողովուրդները սուրով եւ դերութեամբ չարչարելու, Արի-Ասլան հրաժարելով փախստական թաղաւորը հետապնդելէ, իր մեծ բանակով դնաց պաշարեց Ախալքալաքը, այսինքն Ախալքալաքէն, զետեղուած Ջաւախք գաւառի հիւսիսակողմը: Քաղաքը անպարկիստ էր, բայց անոր պահակազուրկը նախամեծար համարեց կոտորուիլ քան անձնատուր ըլլալ. հոս Արի-Ասլան զարհուրելի կոտորած մը ըրաւ ոխով անողորմ. «Կոտորեց բոլոր քաղաքը, կ'ըսէ Մ. Ուսայեցին. այր եւ կին, քահանաները, կրօնաւորները եւ իշխանները սրախողխող ըրաւ, եւ բոլոր քաղաքը արիւնով լեցուեցաւ, քաղաքը աւարի տրուեցաւ, եւ գերի վարեց բոլոր չափահաս մանուկները եւ աղջիկները. իսկ կողոպտած ոսկիի, արծաթի, ապակեքներու եւ մարգարիտներու թիւը անհամար էր»⁽⁶⁾: Նոյն աւերը տարածեց Շամշուղտէ եւ ուրիշ տեղերու մէջ:

Արի-Ասլան յետ հարաւային Վրաստանի վրայ Սելճուքեան բարկութեան

սարսափը տարածելու եւ դերին ու աւարը Պարսկաստան ուղղելու, սղծալի զապար մը յղացաւ, իրեն կնութեան առնել քրիստոնէութիւն մը. սրատրամաւորները զրկեց Գուգարքէն Բ. Սելճուքեանի Կորիկէ Բագրատունի հայ թագաւորին, որդի Դաւիթ Անհուրին, որ կը նստէր Լոռի մայրաքաղաքը, հայկական Տաշիրքի կամ Գուգարք գաւառի ծայրը, եւ անոր աղջիկը հարսնութեան խնդրեց⁽⁷⁾: Կորիկէ վախճալով, կ'ըսէ Մ. Ուսայեցին, իր դուստրը Արի-Ասլանի հարս զրկեց, Տաշիրքի վրայ չհրաւիրելու համար Սելճուքեաններու արշաւանքին զարհուրանքները: Կորիկէի գիջումէն այնչափ դոհ մնաց ահա Սուլթանը, որ, ինչպէս կ'ապահովցնէ մեզ նոյն սրամիջը, «արար ընդ մա սէր եւ խաղաղութիւն յալիտեան, եւ գրագաւորն Աղուանից յաղարկեաց մեծաւ պատուով ի քաղաքն իւր, Լոռի, բազում ընծայիւք»⁽⁸⁾:

Ասիկա «քաղաքական պատշաճի ամուսնութիւն» էր, ճիշտ այնպէս, ինչպէս երբեմն ըրեր էր Թէոդորոս Բ. Բիւզանդիոյ կայսրը, որ քաղաքական ծանր պայմաններէ բռնադատուած՝ հելլէն ազնուատոհմ իշխանուհի մը հարս տալով Հոնաց Ատտիլայի արքային, հռոմէական արեւելեան կայսրութեան վրայէն հեռացուց ահարկու աշխարհակալին սպառնալիքները:

Երբ հայազգի իշխանուհիին հարսնութիւնը սանձ կը դնէր Արի-Ասլանի սպառնալիքներուն՝ Վրաստանի եւ Աղուանիստանի դէմ, Սելճուքեան միւս բանակը, առաջնորդուած Մելիք Շահէն եւ Նիդամ-Ալ Մելիքէն, կը տիրէր բիւզանդական բազմաթիւ ամրոցներու, զրեթէ ոչնչութեան վերածելով Հայաստանի պաշտպանութեան դուռը, զոր ապրկար Հոռոմները իրենք վերցուցեր էին:

5 Մ. Ուս. Բ. 173-174:

6 Մ. Ուս. Բ. 175:

7 Հմմտ. Մ. Ուս. Բ. 174:

8 Մ. Ուս. Բ. 174-175:

Ուշադրաւ հանդամանքն այն է, որ ո'չ միայն Անգրիկովիտի աշխարհագրական բախտաւոր դիրքն էր որ թոյլ չտուաւ որ Սելճուք բարբարոսները վեր յառաջանան, այլ եւ այդ վրացիները, Աղուանները, Եգերացիները, Արիսպները, քաղաքակրթութեան պարզ աստիճանէ մը զուրկ, չունէին ծաղկած վաճառականութիւն եւ ճարտարարուեստ, որ ժողովուրդի մը հարստութեան եւ բարգաւաճումին հիմերը կը կազմէին: Մինչդեռ Հայաստան իր հարուստ, ծաղկած, բարգաւաճ, չէն եւ բազմամարդ քաղաքներով ամէն բարբարոս աղդի ախորժակ կը զրգոէր, եւ զարմանալի չէ որ Սելճուքները իրենց աչքերը Հայաստանի վրայ սեւեռէին:

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԻ ԱՍՊԱՏԱԿՈՒՄԸ

Եւ յերաւի, Արի-Ասլան, դառնալով Աղուանիստանի եւ Վրացական Գուգարքի կողմերէն, իր հզօր բանակով մտաւ Արարատեան աշխարհը, եւ իր «դառնութեան մարտը, կ'ըսէ Մ. Ուսայեցին, թափեց բոլոր հայոց աղղին վրայ, արիւնով, սո՛վով եւ գերութեամբ դատելով»⁽⁹⁾: Դեռ աւելի ցնցիչ է ահաւատեա Լաստիվերոյի զրիչը. «Հասանէր քաղաքն բազում բիւրուք եւ անքիւ սպառազինօք, մտեալ յաշխարհս մեր, ահ եւ երկիւղ հասուցանէր հեռաւորաց եւ մերձաւորաց, կոխէր տապալէր գաշխարհս բազումս»⁽¹⁰⁾:

ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Յետ Արարատեան դաշտը արիւնով ներկելու, հայ հողիները սուղով պատելու, եւ բոլոր երկիրը կրակի նման լափիղեւու, «պարսից չար վիշապը քաղեց Շիրակ գաւառին վրայ» եւ «իբրեւ գիւրքորկալից ամպ մ'բազին բուռն գօրութեամբ եհաս ի քաղաքաւնիստ Անի» իր վրանը կանգնելով քաղաքին դիմաց, եւ տարածելով բանակը երկրին լայնութեան վրայ⁽¹¹⁾:

9 Մ. Ուս. Բ. 175:

10 Ա. Լաստ. ԻԴ. էջ 110:

Անին, շինուած Ախուրեան մեծ գետին վրայ, ամրացած հաստատուն եւ անմատոյց ահադ պարիսպներով, զարդարուած հոյակապ եւ բարձրաչէն մեծամեծ ապարանքներով, մեծ բազմամբոյ քաղաք մըն էր: Անի ունէր հարիւր հազար տուն, բընակիչները փարթամ, քաղաքը կը պարունակէր անբաւ դանձեր: Եւ երբ Յոյները դայն գրաւեցին, թողին դայն ինչպէս որ էր: Բայց անոր զինուորական կազմակերպութեան պատկերը ողբալի էր: Բիւզանդական դրաւումը հազիւ սկըսած, Յոյներու առաջին դործն եղեր էր, ինչպէս Հայաստանի ամէն կողմ, այսպէս ալ Անի քաղաքէն տակաւ առ տակաւ հեռացնել հայկական դուռները եւ հայ քաջ իշխանները, անոնց տեղը դնելով բախտախնդիր վարձկան պահակազուրկ մը, որուն դործը չէր, անշուշտ, կռուիլ ի շահ հայրենիքի մը՝ որ իրենք չէր, պաշտպանել ժողովուրդը մը՝ որուն հետ որեւէ հոգեկան եւ նիւթական կապ չունէր: Յոյները, ինչպէս տեսանք, Անիի վրայ կարգեր էին յոյն դուքսեր, երբեմն ալ նաեւ հայ իշխաններ, որոնք հայ ժողովուրդին վրայ քսան տարիէ ի վեր տուրքեր դրած էին: Երբ Արի-Ասլան եկաւ ու բանակ դարկաւ Անիի առջեւ, քաղաքին դուքսն էր հայազգի մը, Բագրատ, հոգւով սրտով յարած յոյներուն, եւ «անոր իբր երկրորդ» կար Գրիգոր անունով իշխան մը, որդի վրացի Բակուրանի⁽¹²⁾, ժառանգ զինուորական ընտանիքի մը:

Չարաւոյն բան մըն ալ այն էր, որ բերդաքաղաքը չափազանց խճողուած էր, որովհետեւ երբ թուրքերը Շիրակ գաւառին մօտեցեր էին, ահադին թիւով մարդիկ, կիներ, ծերեր եւ տղաներ եկեր ապաւինել ինք քաղաքին պարիսպներուն ետեւ: «Այնչափ էր այդ բազմութիւնը, կ'ըսէ Մ. Ուսայեցին, որ անհաւատները կը համարէին, քէ Հայաստանի մեծ մասը

11 Ա. Լաստ. անդ:

12 Մ. Ուս. Բ. 177:

պարիսպներու մէջ է, եւ սարսափ կը գգային՝ կարծելով որ այդ բազմալեզուներ զինուորներ են»⁽¹³⁾։ Մեկին ուր ամենէն աւելի տաքնապէս ուղեւորէն էր, այդչափ բազմալեզուներն ոչ պաշար չար եւ ոչ ալ ջուր⁽¹⁴⁾։ Այդ դժուարին կացութեան մէջ էր Անին, երբ Ալի-Ասլան, 1064ի Յուլիս 21ին, բուն զօրութեամբ պաշարեց հսկայ բերդաքաղաքը, որուն բարձր պարիսպներուն եւ սքանչելի շէնքերուն վրայ ապստամբ մնաց. բայց սկսաւ վարանիլ թէ ինչպէս պիտի գրաւէր զայն, քանի բունութեամբ կամ պաշարումով անոր տիրանալու յոյս չունէր. մանաւանդ կը մտածէր որ յոյները հայկական հողին վրայ կատարուած անընդհատ արշաւանքներէն ցնցուած, յետ նենգութեամբ գրաւելու զայն, զինուորապէս զօրացուցած պիտի ըլլային արեւելքի այս միջնաբերդը։ Այս վարանումը փարատելու համար, քննիչներ ուղարկեց ստուգելու թէ որ կողմը տկար է, պատերազմը այդ կէտէն սկսելու համար։ Անոնք տեսան որ քաղաքը ամէն կողմէ ամուր եւ անմատչելի է. միայն մէկ կէտ մը կար՝ ուսկից կարելի էր կրող ուրիշ, բայց ան ալ դժուարին։ Սուլթանը հրամայեց ճիշտ այդ կողմը կանգնել մեծ եւ զարհուրելի բարանը, որ իրեն հետ բերած էր։

Երբ քաղաքացիները տեսան թշնամի զինուորներու բազմութիւնը՝ սարսափեցան, որովհետեւ պատերազմի անպատրաստ էին, բայց վստահ քաղաքին ամբողջութեան վրայ, պատրաստուեցան պարսիկներու դէմ «ուժգին զօրութեամբ»⁽¹⁵⁾։ Սարսափը կատարեալ խուճապի վերածուեցաւ, երբ տեսան քաղաքին առջեւ կանգնած ահագին բարանը, որ սկսեւ էր պարիսպը ծեծել. «Եւ յայնժամ, կ'ըսէ Մ. Ուսայեցին, յաիէ չար գազանին դողաց սասանելով ամենայն ազգի հաւատացելոց, սկսան լալ հայր ի վերայ որդւոյ

իւրոյ, եւ որդին ի վերայ հօր իւրոյ, մայր ի վերայ որդւոյ իւրոյ եւ դստերն, եւ դուստր ի վերայ մօր իւրոյ, եղբայր՝ գեղբայր, սիրելին առ սիրելին իւր»⁽¹⁶⁾։

Երբ պաշարումը երկարեցաւ, յուսակումը լալով եւ հառաչելով բոլոր քաղաքը պահելու եւ աղօթքի դիմեց։ Այդ միտքին լացի եւ հառաչանքի օրը «հազար եւ մէկ եկեղեցիներ, կ'ըսէ Մ. Ուսայեցին, ի պատարագի կայր յԱնի»⁽¹⁷⁾։ Հոս ալ, ինչպէս ուրիշ քաղաքներու մէջ տեսնուեցաւ որ «եկեղեցի ի պատարագի կայր» բացատրութիւնը ցոյց կու տայ պատարագ մատուցանելիք սեղաններ, որոնք ամենէն աւելի բազմութիւն էին Անիի եկեղեցիներու զանազան խորհրդերու մէջ, եւ այդ լալու եւ հառաչանքի օրը՝ քահանաները պատարագ կը մատուցանէին։ Այս հսկումի տեսնելով Բագարատ դուքսը, իրրեւ վերջին հնարք, քաղաքացիներէն ժողովեց պատերազմող հզօր մարդիկ, որոնց հետ խառնեց ձեռքի տակ ունեցած քանի մը զինուորները, եւ սկսաւ վերէն քաջութեամբ պատերազմիլ թշնամիին դէմ, եւ անոնցմէ շատեր գետին տապալեց։ Բայց որովհետեւ մեծ բարանը ստէպ ստէպ կը բախէր, պարիսպին անցնելիք նեղ մասը վտանգուեցաւ։ Ասոր վրայ Բագարատ իր ոյժերը հաւաքելով այդ կէտին, բոլոր զօրութեամբ պատերազմեցաւ։ Բայց որչափ որ ան պատերազմը կը սաստկացնէր, այնչափ ալ թշնամիները կը սաստկացնէին բարանին հարուածները։ Եւ թէպէտ Գրիգոր Վրացին շատ հրեանքներ փորձեց բարանին դէմ, բայց չկրցաւ տկարացնել անոր զօրութիւնը. ասոր համար ամէնքը յուսալքուեցան, չկարենալով հնարք մը գտնել, չարիքը խափանելու⁽¹⁸⁾։

Օր մը ամբողջ այս զործողութիւնը տեսեր էր. բայց երկրորդ առաւօտը, դեռ արեւը չծագած, երբ թշնամին բարանը

զարձեալ շարժեց պարիսպին վրայ, կործանեցաւ վտանգուած մասը։ Ասոր վրայ՝ թուրքերը առ հասարակ աղաղակ արձակեցին, միարեան աղաղակեցին նաեւ քաղաքացիները։ Թուրքերը ուրախութեամբ աղաղակէին, որովհետեւ կը կարծէին թէ այդ փլած անցքէն, պիտի կարենան զիւրութեամբ մտնել քաղաքը. իսկ քաղաքացիները վախէն աղաղակէին, որովհետեւ կը կարծէին թէ պարիսպէն ուրիշ մասեր ալ կ'ործանած ըլլան⁽¹⁹⁾։

Հրոսակները, Ալի-Ասլանի ձայնէն խրախուսուած՝ դիմեցին փլած տեղը եւ փութացին ներս մտնել. բայց որովհետեւ տեղույն անցքը նեղ եւ քարուտ էր, կարելի չէր համարձակ մտնել քաղաքին մէջ։ Իսկ քաղաքին զինուորները տեսնելով թէ կարող են զանոնք անկէ վանել, պատերազմեցան թշնամիներուն դէմ, կոտորելով բաւական թուով մարդիկ։ Կոխը տեւեց երեք ժամ⁽²⁰⁾։

Երբ Ալի-Ասլան տեսաւ թէ կարելի չէ պարիսպին փլած կողմէն քաղաքը մտնել, եւ ուրիշ կողմէ հնար չէ պատերազմիլ կամ բարանը ուրիշ կողմ ուղղել, քաղաքը առնելէ յուսահատուած «կ'ուզէր չուլի», որպէսզի իր զինուորները զուր տեղ չկոտորուին։ Պաշարումը տեսնելէ քսանեւհինգ օր, ինչ որ հին ժամանակներու համար կը նկատուէր երկար պաշարում։ Երբ Ալի-Ասլան այս խորհուրդը կ'որոշար, բերդաքաղաքին մէջ կը պատահէր զինուորական վատ դործ մը։ Բագարատ եւ Գրիգոր, կայսերական ստրկամիտ զօրավարները, զորս Ուսայեցին կը կոչէ «աւօրէն իշխանին Հոռոմոց»՝ գորս կացուցեալ էր քաղաքին պահապան տանն հայոց, սկսան ամբարնալ ի վերին եւ ի ներքին բերդին⁽²¹⁾։ Այս դասալքութեան պատճառն այն էր, որ Հոռոմոսներու երկու

իշխանները վախով լի, փրկութեան ամէն յոյս կտրած, պատերազմելէ ձանձրացած, կարծելով թէ թուրքերը մեքենաներով պատերազմը աւելի պիտի սաստկացնեն, խորհուրդ ըրին՝ կա'մ վերին բերդը ամրանալ, կամ փախչիլ, եւ կամ անձնատուր ըլլալ։ Առաջին կէտը դործադրելով՝ Բագարատ եւ Գրիգոր իրենց զինուորներով միասին փութացին երաններ քնարերդը եւ հոն ամրացան, թողնելով յուսակումը ժողովուրդը իր տխուր բախտին։

Գրեթէ մի եւ նոյն ժամանակ, Ալի-Ասլան, որ արդէն ծրագրեր էր, ինչպէս տեսնուեցաւ, Անիէն քաջուիլ, նկատելով անոր ամուր եւ անմատչելի դիրքը, հրամայեց իր բանակին որ պաշարումը վերցնէ եւ քաջուի դէպի Պարսկաստան, հետք տալով իր կողմէն կահ կարասին։ Ալի-Ասլան նահանջի հրամանը տուած ժամանակ՝ չէր գիտեր թէ կայսերական զօրավարները յուսահատութեան մատնուած են, այնպէս որ ականատես Ա. Լաստիվերցին կրցաւ գրել. «Եւ զայն ոչ գիտացեալ (Ալի-Ասլան) քէ էարկ Տէր ի մէջ պահապանաց եւ իշխանացն երկապառակութիւն եւ անմիաբանութիւն, ամբարնուին եւ բաժանուին, եւ անդէն քողեալ զգործ պատերազմին (Բագարատ եւ Գրիգոր) ի փախուստ դարձան»⁽²²⁾։ Այսպէս ալ ասոնք չէին գիտեր թէ Սուլթանը իր բանակով սկսեւ էր նահանջել։ Եթէ Անին պաշտպանողները քիչ մը դիմադրական ողի ցոյց տուած ըլլային, Բագարատը նեղ հոյակապ մայրաքաղաքը ոչ պիտի տնտուէր, եւ ոչ ալ անոր ժողովուրդը պիտի կոտորուէր։

ԱՆԻԻ ԳՐԱԽՈՒՄԸ

Ոչ ոք կը մտածէր թէ Անին ականատես պիտի ըլլար ողբերգական տեսարանի մը. մէկ կողմէն «յորժամ տեսին քաղաքացիքն գաստուածուրաց պահապանացն ամբարնալն՝ բեկան, եւ այր իւրաքանչիւր ի փախուստ լինէր առանց պատմաւի»⁽²³⁾։ Միւս կողմէ անոնք չէին գիտեր թէ թուր-

13 Մ. Ուս. անդ.:

14 Ա. Լաստ. ԻԳ. 110:

15 Մ. Ուս. Բ. 176:

16 Մ. Ուս. անդ.:

17 Մ. Ուս. Բ. 177:

18 Հմմտ. Զամչեան, Պատմ. Բ. 979:

19 Հմմտ. Զամչեան, անդ.:

20 Հմմտ. Զամչեան, անդ.:

21 Մ. Ուս. Պատմ. Բ. 177:

22 Ա. Լաստ. ԻԳ. 110:

23 Մ. Ուս. Բ. 177:

նամին Պարսկաստան մեկնած է, այլ կը կարծէին պարզապէս հեռացած, որպէսզի պատրաստուին եւ նոր յարձակում գործեն անպաշտպան քաղաքին վրայ. որով անոնց կրած տաղնապը կրկնապատկուեցաւ, համարելով թէ քիչ ատենէն թշնամին շուտով յարձակում պիտի գործէ, ներս պիտի մտնէ եւ զիրենք սուրէ պիտի անցընէ: Այսպէս արեկոծ եւ չփոթ, խռովութեան ծփանքի մէջ տատանելով, սկսան կոծել ու լալ: Ապա, օգուտ քաղելով թուրքերուն բացակայութենէն, քաղաքացիներէն շատերը, առանց պատճառի, աւելի քան յիսուն հազար հոգի, քաղաքին միւս կողմէն դուրս ելլելով սկսան փախչիլ ու ցրուիլ. իսկ քաղաքին մեծամեծները, կը դրէ Ուսահայեցին, «երթեալ լալով եւ անկանէին ի վերայ գերեզմանացն առաջին քաղաքացի հայոց, եւ անդ կոծ առեալ սաստկապէս լալով եւ ասէին, եթէ արիւք տեսէ՛ք գտունդ հայրենեաց մերոց»⁽²⁴⁾:

Սակայն Անեցիներու չար բախտէն՝ Սուլթանին սպառազէն վերջապահ գունդը, բաղկացած չորս հարիւր հոգիներէ, որ զեռ քաղաքին սահմաններէն հեռացած էր, լսելով քաղաքացիներու աղաղակը, տեսնելով շատերու ցրուիլը, զարմացան մնացին, չգիտնալով եղածին մեկնութիւն մը տալ. զինուորներէն մէկը զիմեց դէպի քաղաքին դուռը, եւ երբ լսեց խռովայոյզ չփոթութեան դոջումը, եւ շատերուն փախուստի խուճապը, փութով ետ դարձաւ՝ դէպքը իր ընկերներուն իմացներու համար: Անմիջապէս զինուոր մը զրկեցին Արփ-Ասլանին, աւետիս տալու համար, իսկ միւսները զիմեցին քաղաքը, տեսան որ պարիսպը «անպահապան» է⁽²⁵⁾ փլած կողմէն, եւ տեսնելով յուզուած մարդոց եւ կիներու աղմուկը, իրենք ալ չփոթեցան, ընկերներն չգիտնալով. յանկարծ զաղափար մը ծագեցաւ մտքերնուն մէջ, յափշտակեցին մանուկ մը մօր զիբիէն, քաղաքէն դուրս ելան, եւ շտապով հասցուցին դայն Սուլթան Արփ-Ասլանին, ըսելով. «այս քեզ նշան ի քաղաքէն, զի

ահա առաք գաղափա Անի»: Սուլթանը նախ զարմացած՝ չուզեց հաւատալ, բայց տեսնելով մանուկը, եւ անոնցմէ տեղեկանալով անցած դարձածը, համոզուեցաւ զինուորներուն ըսածին, եւ ըսաւ «աստուածն ևնցա մատնեաց զնոսա այսօր զանառ քաղաքն ի մեռս իմ»⁽²⁶⁾: Այն ատեն Արփ-Ասլան իր զինուորներու բազմութեամբ անմիջապէս ետ դարձաւ եւ մուտք գործեց Անի քաղաքը, ուր մինչեւ այդ ժամանակ ոչ մէկ թշնամի ստի կոխած էր:

ԱՆԻԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Անօրէն յաղթութենէն վերջ, սելճուքները խուժեցին Անի քաղաքին մէջ, իրենաւորջ վիրաւոր եւ արեան ծարաւի, կատաղարար զիմեցին, զաղանարար յարձակեցան. նա մանաւանդ անոնք, որ պաշարման ժամանակ, պաշարուածներէն չարաչար հարուածներ ընդունեցին, անոնք անոյն ու անպաշտպան ընակիչներու վրայ բռնած էին «երկու քաջասուր դանակներ, կ'ըսէ Մ. Ուսահայեցին, իւրաքանչիւր մեռիմ մէջ հատ մը, եւ երբորդ մը ակռաներուն մէջ»⁽²⁷⁾: Այսչափ բաւական է, հասկնալու համար թէ ինչպիսի ահաւոր կոտորածով մը սելճուքեան թուրքերը իրենց անունը պիտի յաւերժացնէին տիեզերահռչակ քաղաքին տարեգրութիւններուն մէջ: «Սկսան գամեայն քաղաքն առհասարակ կոտորել անողորմաբար, եւ գայնման քաղաքին քաղաքին նման դալար խոտոյ հունձածին, եւ կամ որպէս գաբալայոյս ի միւս մեանց վերայ կոյտ արարին. եւ առ վայր մի ծովացաւ ամեայն քաղաքն արեամբ»⁽²⁸⁾: Ալ աւելի սոսկայի է ահանատեա խառնութեան վառ եւ փնդանի նրկարարութիւնը: Յետ ըսելու թէ «իբրեւ

24 Մ. Ուսահ. Բ. 178:
25 Մ. Ուսահ. անդ:
26 Մ. Ուսահ. անդ:
27 Մ. Ուսահ. անդ:
28 Մ. Ուսահ. Բ. 178-179:

զկուտակումն ալեաց ծովու ի ծոց քաղաքին հեղուին, եւ գաբալայական սուրն ի գործ արկեալ, ոչ ումեք խնայէին», կ'ընէ՝ նէ զարհուրելի մանրամասնութիւններու. «Անդ էր տեսանել զվիշտս եւ գտագնապս իւրաքանչիւր հասակի. զի ի գրկաց մարցրն յափշտակեալ լինէին մանկունք անողորմաբար գաբալի հարեալ, եւ մարքն արեամբ եւ արտասուօք զմանկունս իւրեանց բանային. գիայր եւ գորդի մի սուր խողիւր. զի ծեբք եւ երիտասարդք, փահանայք եւ սարկաւագունք զմի սրոյ մաշակ մահու ընկալան, զի լցաւ քաղաքն լի ծայրիւ եւ ծայրիւ, եւ մանապարհ էր մարմին սպանելոցն. զի ի քաղաքէնէ կոտորելոցն եւ յանքուելի դիականցն վրտակն մեծ, որ անցանէ առ քաղաքն, ներկանէր արեամբ. եւ գազանք վայրի եւ ընտանի եղ եւ գերեզման դիականցն, վասն զի ոչ գոյր որ քաղէր եւ հարկաւոր հողովն ծածկէր զխողիւրեալսն»⁽²⁹⁾:

Ամէնչէն աւելի վարդան պատմիչն է որ քանի մը տողերու մէջ կ'ամփոփէ ու կը խտացնէ թշնամիին բռնածին անդթութիւնը. Արփ-Ասլան, կը դրէ նա, «հազար այր գեմու ի փոս մի, եւ լոգանայ յարեան, զոն մեռելոց իւրոց արարեալ»⁽³⁰⁾: Մարդկային արիւնով լուսացուիլ եւ այն օդոստոս ամսուն մէջ, յետին բարբարոսութեան յատկանիշ է: Յետ արիւնալից կոտորածին, զինուորները տուններու եւ պալատներու դռները խորտակելով, հասցը բոլոր մեծամեծ իշխանները բռնեցին, զանոն տանջանքներով լլկեցին, ստիպելով որ ցոյց տան իրենց զանձներուն տեղերը. ոմանք կ'ապեցին եւ ծեծեցին, ուրիշները խողխողելով անոնց գիւղները մաս առ մաս կտրելով թողուցին անոնց տուններուն մէջ⁽³¹⁾: Իսկ Մ. Ուսահայեցին կը վկայէ թէ «ամեայն մեծամեծ իշխանքն տանն հայոց, եւ դաք ազատացն երկարի կապանօք կային առաջի Սուլթանին»⁽³²⁾: Թուր-

քերը իրենց զառնութեան մաղձը ամէնչէն աւելի եկեղեցականներու վրայ թափեցին. ձերբակալելով պատուական քահանաներ՝ սուրէ անցուցին, ուրիշներ կրակով այրեցին, ոմանք տանջանքներով փճացուցին, ուրիշներ ջուրի մէջ խեղդեցին, զեռ ուրիշներէ պահանջեցին ցուցնել եկեղեցիներու զաղտնի գանձերը եւ անոնց չյանձնուելուն համար «բազում սրբաբնուող փահանայք այրեցան հրով, նա եւ զովանս յոտից մինչեւ ցզուլս քերթեալ չարաչար խոցուածով, որ եւ տեսողացն սոսկալի էր»⁽³³⁾: Քաղաքացիներէն մեծ բազմութիւն մը, առանց աղաղակնի կամ մտերիմ բարեկամի ուշ դարձներու, այլ վախէն մղուած, փախեր էր զլսուն ճար գտնելու: Ասոր է որ կ'ակնարկէ Լաստիվելոյցին. «Իսկ քաղաքին արանց եւ կանանց յապարանս քաղաքացն դիմեալ իբր քէ կարիցեն ապրիլ, եւ այլքն հողոպրեալ յամուրն որ ներքին բերդ կոչի»⁽³⁴⁾:

ԱՆԻԻ ԱԻԵՐՈՒՄԸ

Անուր անդթութիւններուն առերթեր՝ տեղի ունեցաւ նաեւ քաղաքին աւերումը: Շատ մը եկեղեցիներ կողոպտելէ, անոնց բոլոր զարդերը մերկացնելէ եւ անոնց սրբութիւնը սղծելէ վերջը, կրակի տուին: «Չարապործ աղգէն մէկը, կ'ըսէ Մ. Ուսահայեցին, զաղտնի ճանապարհով բարձրացաւ կաթողիկէ եկեղեցիին դրմբէթին ծայրը, եւ մեծ աշխատանքով վար նետեց արծաթէ թանկազին խաչը, որ կը զարդարէր մայր տաճարին զազաթը»:

29 Ա. Լաստ. Ի. 110-111:
30 Վարդան Վրդ. Պատմ. էջ 101:
31 Հմմտ. Չամչեան, Պատմ. Բ. 981:

32 Մ. Ուսահ. Բ. 179:
33 Մ. Ուսահ. անդ:
34 Ա. Լաստ. Ի. 110:

Խաչակործան պիղծը, կը շարունակէ նոյն պատմիչը, խորափոս տեղերէ ներս մտաւ, կտրեց ու վար նետեց բլրեղէ հսկայ ու մեծաղին ճրագարանը կամ ջահը, որ փշուր փշուր եղաւ: Յետոյ նոյն պատմաբանը կը յաւելու. «Իսկ յորժամ մանրեցաւ պլոր կանթեղն՝ որ այլ էջը լեալ ի վերայ արարածոց, լուեալ Սուրբանն յոյժ վերաւորեցաւ»⁽³⁵⁾: Յիրաւի, Արի-Ասլան իրաւունք ունէր այդ ջահին փճացումին վրայ ամփոփանալու, ոչ թէ զեղարուեստի սիրոյն համար, որմէ ի սպառ զուրկ էր, այլ որովհետեւ զեղարուեստի այդ ճնաշխարհիկ դործը, զոր Սմբատ Տիեզերակալը բերել տուեր էր Հնդկաստանէն, «Բիւր մի դանձուց» արժեք էր, եւ կը կշռէր 12 լիտր⁽³⁶⁾. անդնահատելի հարստութիւն մը, որ վայրագ Սուրբանի ձեռքէն կը փախչէր:

Մինչդեռ հրոսպետին զինուորները այգւղիսի անողորմ կոտորածներու եւ քանդումներու ետեւէ էին, երկինքը սկըսաւ սուգ բռնել եւ լալ քաղաքին վրայ, մանաւանդ հայ աղղին վրայ: Յիրաւի երկինքը յանկարծ մթնեց, խաւարեցաւ, ահազին կերպով որոտաց եւ գոչեց, եւ թափեց այնչափ յորդ եւ սաստիկ անձրեւ, որ քաղաքին մէջ հեղեղ մը յարոյց. «Յորժամ ընկէց գլխաւն ի գումբէքէն, կ'ըսէ Մ. Ուռհայեցին, նոյնժամայն եղեւ սաստիկ որոտումն եւ անձրեւ բազում եւ գամեմայն գգէշն կոտորածոյն ելից յԱխուրեան գետն, եւ լուաց յարեմէ գամեմայն քաղաքն»⁽³⁷⁾:

Թէեւ այս զիպուածին վրայ թուրքերը քիչ մը զաղբեցան քաղաքը քանդելէ, բայց երկրորդ օրը դարձեալ սկսան քաղաքին մէջ պրպտումներ կատարել եւ նորանոր աւերներ դործել: Հուսկ թշնամին իր յաղթանակը վերջացուցած էջը նկատեց, եթէ պատերազմելով չտիրէր ներքնաբերդին, որուն անաշխատ տիրեց, վասնզի անոր պահակազուրդը, քաղաքին գլխուն եկած հարուածներէն սարսափած, զազանի ճամբով անկէ վատարար փախեր էր⁽³⁸⁾:

Երբ Արի-Ասլան Անիի տիրեց եւ աւերեց, կ'ըսէ Ուռհայեցին, հրամայեց որ զերի տարուին «ամեմայն մեծամեծ իշխանի տանն հայոց եւ հաւաք ազատացն... եւ կանայք գեղեցիկք եւ ահարկուք ի փառաւոր տանէն, վարեցան ի պարսիկս ի գերութիւն. եւ անհամար մանկունք լուսատեսիլս, վայելուչս աղջկունս տարան գիետ մարցն»⁽³⁹⁾: Խաչը, որ մայր տաճարին դմբէթի զաղաթէն վար նետեց էին, Սուրբանին հրամանով զինուորները տարին Նախընտան քաղաքը, եւ զերին մղկութի դրան յատակին վրայ, որպէս զի մըտնողները անոր վրայ կոխեն «որ կայ մինչեւ ցայտօր»⁽⁴⁰⁾, սակայն քիչ ժամանակ վերջ, արդէն զոյգեր են⁽⁴¹⁾:

Սելճուքեան տիրապետութիւնը հաստատելու համար մեր երկրին մէջ, Սուրբանը պէտք էր Անիի բիւզանդական տիրապետութեան հետքը ջնջէր. ուստի քաղաքին վերակացու դրաւ աղղով պարսիկ մը, անոր ձեռքին տակ զնելով իր զինուորներէն կազմուած պահակախումբ մը, նոյնպէս ըսաւ այն բոլոր քաղաքներուն մէջ, զոր հոռոմներու ձեռքէն խլեր էր: Բարբառաւորաբար Անին բոլորովին աւերակ ու անմարդաբնակ չեղաւ, եւ Արի-Ասլան սուրէ ճողոպրած հայերը զործածեց քաղաքին քանդուած մասերը չինելու. ու այլ եւ այլ տեղերէ ալ մարդիկ բերելով, հոն բնակեցուց: Թէպէտ քիչ ժամանակի մէջ քաղաքը դարձեալ բնակեցաւ, բայց ոչ ինչպէս էր առաջ⁽⁴²⁾:

Անի մեծ քաղաքին առումը եւ աւերումը մը տեղի ունեցեր էր «ի տօնի Տիրամօրն, յաւուր երկշաբթոյ»⁽⁴³⁾, որ է վերափոխ-

35 Մ. Ուռհ. Բ. 179 Պըլօր, որ կը նշանակէ ոսկի կամ սառնաստեակ ոսկի մը:

36 Մ. Ուռհ. Բ. 179:

37 Մ. Ուռհ. Բ. 180:

38 Հմմտ. Չամչեան, Պատմ. Բ. 982:

39 Մ. Ուռհ. Բ. 179:

40 Մ. Ուռհ. Բ. 180:

41 Հմմտ. Չամչեան Բ. 982:

42 Հմմտ. Չամչեան, անդ:

43 Սամուէլ Անեցի, էջ 112:

ման երկրորդ օրը, 1064 թուականի Օգոստոս ամսուն 16ին:

Դիտողութեան արժանի կէտն այն է որ ժամանակակից Ա. Լաստիվերացին, Անի քաղաքին՝ զոր ինքը «տիեզերահոյակ» կ'անուանէ, թշուառութիւնները կենդանի դրնով նկարագրելէն ետք՝ կարծես նա զուրկ չի զգար, ոչ մէկ ողբ, ոչ մէկ հառաչանք, այլ պարզապէս կ'ըսէ. «Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, եւ ի քրտանց տնանկաց փարքամանան, եւ ի վաշխից եւ յանիրաւութեանց գոռնս իւրեանց ամբարցունեն. եւ ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առ ազատս եւ տնանկս, միայն հեշտութեան եւ փափկութեան սպասեն, եւ ի գործոց աղտեղութեանց ոչ խորշին, այլ միայն արբեալ լինին ի ցանկութեանցն, որ գնոսս ըմբռնեալ ունի: Եւ արդ, զի՞նչ լինի նոցա ի հասանել քարկութեան Տեառն. սպառնի եւ պակասին որպէս մոմ յերեսաց հրոյ, երբէ քաղաւոր իցէ եւ երբ իշխան»⁽⁴⁴⁾:

Օրմանեան պատրիարքը, հրապարակելով «շինեն զինքեանս արեամբ օտարաց, եւ ի քրտանց տնանկաց փարքամանան» եւ ի քրտանց տնանկաց փարքամանան» լեզուով կ'ըսէ, թէ քաղաքներէն, կ'եղբակացնէ՝ թէ քաղաքներէն միտքն է ոչ թէ հայերը, այլ պատմիչին միտքն է ոչ թէ հայերը, այլ տիրապետող յոյները դատապարտել»⁽⁴⁵⁾: Բայց աւելի ճիշտ է ողբերգակ պատմիչին խիստ մեղադրանքները մեկնել հայոց վրայ: Ա. Լաստիվերացիի մտքին մէջ, Անի քաղաքը «Երեւոյն է, որուն բնակիչները իրենց աշտարակներու ամբարաններէն իրենց կարծէին թէ իմենակալին սուրը էջը կրնար իրենց ալ մօտենալ»⁽⁴⁶⁾. ապա կը յաւելու. «Ամուրն Անի եւ որ շուրջ գնովալ դատեմք իւր առաւել յամբարտաւանութիւն կրքեալ բնդդէմ երկնից կայքս հարկանէին. մինչեւ շարժեաց Աստուած զքաղաւորն Պարսից փոխանակ ինքեան տեսանել քէ զինչ

գործի ի նմա»⁽⁴⁷⁾: Լաստիվերացի, որ ժամանակակից էր, որ այնքան զեղեցիկ կերպով նկարագրած էր Բագրատունեաց թագաւորութեան փառքը, զիտէր որ հայ իշխանները, ազնուական դասակարգը եւ հարուստ վաճառականները՝ վարձկան օտարներու արիւն քրտինքով եւ վաշխով կամ անիրաւ կեղեքումներով փարթամ դարձեր են, ժլատ դտնուելով դէպի աղքատները: Եթէ հայոց մեծատուններուն դէմ մղուած չըլլային անոր այս խօսքերը, անիկա այդպէս խիստ կերպով պիտի չզատէր Անին, եւ պիտի խղճար անոր վրայ, ինչպէս որ իր զգայուն զրիչով խղճացեր էր Արծնի եւ ուրիշ հայ քաղաքներու վրայ: Ականատես պատմիչը ուրիշ տեղ մը Արի-Ասլանի վրայ խօսելով՝ ալ յիշատակ միայն կ'ակնարկէ. «զԱնի խոզալի միայն կ'ակնարկէ. «զԱնի խոզալի միայն կ'ակնարկէ. «զԱնի խոզալի միայն կ'ակնարկէ. «զԱնի խոզալի միայն կ'ակնարկէ»⁽⁴⁸⁾, առանց ողբի եւ առանց կաթիլ մը արցունքի:

Սակայն ինչ որ ալ ըլլայ, ընթերցողը չկարծէ թէ բիւզանդական քաղաքակառուցութիւնն ալ մաս ունեցած չըլլայ. մէկ կողմէ յոյներու նենդութեան երեսէն հակողմէ յոյներու նենդութեան կորսնցուցին, Սելճուքեան արշաւանքներուն առջեւ որբակոտոր եղան. Անին դեռ նոր քանդուած էր, Կարսի թագաւորութիւնը ցրուած. միւս կողմէ ալ հայրապետական աթոռը թափուր մնացած էր, իսկ մնացած հայերն ալ ցրուած արեւելեան Անատոլիոյ բոլոր հողերուն վրայ:

ԳԱԳԻԿ ԱՐԱՍԵԱՆԻ ՃԱՐՏԱԸ ՀՆԱՐԲԸ

Անի քաղաքին զրաւումը անմիջապէս աղղեց Կարսի վրայ, Վանանդ դաւառին մէջ, որ սահմանակից է Շիրակ դաւառին: Գաղիկ Արասեանի մտքին մէջ դեռ թարմ էր Սելճուքեան ջոկատին արշաւանքը, որուն զլուխ կանդնած էր ինչպէս տեսանք, Իպրահիմ-Իրն-Ինալ, եւ Կարսի

44 Ա. Լաստ. ԻԳ. 111:

45 Մ. Օրմանեան, «Ազգագրատուն» Ա. 1205:

46 Ա. Լաստ. ԻԳ. 108-109:

47 Ա. Լաստ. ԻԳ. 109-110:

48 Ա. Լաստ. ԻԳ. 115:

Թագաւորը փրկուած էր շնորհիւ Տուղրիլ Բէկի, որու առջեւէն փախեր էր Սելճուքեան վաշտին ապստամբ պետը: Գաղիկ Արասեան, որ հաղիւ ազատեր էր Սուլթան Տուղրիլի բանակներու հարուածներէն, վարանումով պաշարուեցաւ, եւ սկսաւ մտածել թէ ինչ ձեւով պիտի կարենայ փրկել իր անձը եւ իր զաւառը Ալի-Ասլանի ձեռքէն. որովհետեւ չէր համարձակեր եւ չէր ուզեր փախչիլ, պատերազմիլ չէր կրնար այդչափ բազմութեան դէմ: Մինչդեռ անիկա այս տարակուսանքին մէջ կը վարանէր, «Սուլթանը, կ'ըսէ Մ. Ուսայեցին, անոր պատգամաւոր զրկեց որպէսզի իմացնէ որ զայ, երկրպագէ եւ հնազանդի իրեն»⁴⁹: Սակայն Գաղիկ «այր համաբեղ եւ իմաստասէր», որ Սուլթանին միտքը հասկըցեր էր, պատգամաւորին հասնելէն առաջ՝ ճարտար հնարք մը խորհեցաւ, կ'ըսէ Մ. Ուսայեցին, «անմիջապէս հազաւ սպանորի սեւ զգեստ եւ գետինը մոխիր ցանելով, նստաւ անոր վրայ, կըթնած սեւ բարձի մը վրայ»⁵⁰: Երբ պատգամաւորը տեսաւ զինքը ալիպիսի սպատեսիլ կերպարանքի մը մէջ, շատ դարձացաւ եւ ըսաւ անոր. «Դու թագաւոր մարդ ես, ինչո՞ւ ալիպիսի սեւազգեստ ու սպանոր ես». այն ատեն Գաղիկ հառաչելով պատասխանեց. «Այն օրէն որ մեռաւ իմ սիրելի բարեկամ Տուղրիլ թագաւորը, եղբայր Ալի-Ասլանի, հազայ ես սեւեր եւ մեծ սուղ կը բռնեմ անոր վրայ»: Պատգամաւորը այս խօսքերը լսելով դարձացաւ, եւ իսկոյն զնաց պատմեց Ալի-Ասլանի ինչ որ տեսեր ու լսեր էր: Սուլթանը հիանալով այս բանին վրայ, դուրսով ու սիրով կապուեցաւ հայ թագաւորին հետ, եւ ինքը անցած իր բանակին զլուսը, եկաւ Կարս, եւ ուղղակի զիմեց Գաղիկ թագաւորին, զրկեց զայն, փաթթուեցաւ անոր պարանոցին, ծածկեց զայն մեծ գութով եւ սիրով, եւ հազուեցուց անոր արքայական պատմութեանը եւ մեծապէս փառաւորեց զանիկա⁵¹:

Գաղիկ Արասեան, իր ճարտար կատա-

կերպութեան վրայ դո՛ւ, ուղեց արեւելեան առատաձեռնութեամբ մը շրջանի Պարսկաստանի Սուլթանը, պատրաստելով անոր եւ անոր զինուորներուն փառաւոր հացկերոյթ մը: Մ. Ուսայեցին շահեկան մանրամասնութիւն մըն ալ կուտայ զրկելով. «Եւ զայս այսպէս լսեցաք, երբ մէկ գառին վերայ գոր խորովեաց՝ ծախք եհան հազար դահեկան, եւ հարիւր հազար դահեկան սեղան տուեալ Սուլթանին եւ ամենայն զօրացն ճար, եւ այսու գերծաւ խաղաղութեամբ»⁵²: Ալի-Ասլան Գաղիկ Արասեանը հաստատելով իր թագաւորութեան մէջ, 1064ի ամբան, վերադարձաւ Պարսկաստան:

ՎԵՐՋ ԿԱՐՍԻ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ

Թէպէտ Գաղիկ Արասեան բախտաւոր զոնուեր էր երկու անգամ ազատելով Սելճուքեան թուրքերու արշաւանքներէն, բայց ինքն ալ քաղեց այն կորստաբեր ճամբէն, որուն վրայէն քալեր էին վասպուրականի եւ Շիրակի թագաւորները. ինքն ալ անոնց նման խորհելով որ հանդիստ պիտի չձգեն զինքը իր աշխարհին մէջ, զհապաններ զրկեց Կոստանդին Ժ. Դուկաս կայսեր, խնդրելով որ իրեն շնորհէ պարսպաւոր քաղաք մը, կամ ամուր զգեստի մը կալուածներով միասին, յունական աշխարհին մէջ: Ասոնց փոխարէն, Կարսի թագաւորը կը խոստանար կայսեր՝ Կարս մայրաքաղաքը, Վանանդի բովանդակ զաւառը, անոր սահմաններով միասին:

Արդէն Դուկասի ուղածն ալ այն էր, հայ իշխաններու ձեռքով տկարացնել հայ ժողովուրդին զիմադրական ոյժը, ձեռք զնելու համար անոր վրայ, իրրեւ պատրաստ օրսի մը: Կայսրը Գաղիկ Արասեանի տուաւ բերդաքաղաք մը՝ Ծամնդաւ, բիւզանդական Զոմանդոս, հիմա մեղի

49 Մ. Ուս. Բ. 180:

50 Մ. Ուս. անդ:

51 Մ. Ուս. անդ:

52 Մ. Ուս. անդ:

անձանիթ տեղ մը, Տաւրոսի եւ անտի-տաւրոսի լեռնաշղթաներուն մէջ⁵³, որուն կցուեցան նաեւ Լարիս, Ամասիս եւ Կոմանա քաղաքները, շրջակայ հարիւր զիւղերով միասին⁵⁴: Եւ ըստ ուրիշ պատմիչի մը՝ նաեւ Կեսարեա եւ Խաւատանէք⁵⁵: Ասոնցմէ Լարիսը Սենեքերիմ թագաւորին սահմանին մէջ էր, իսկ Ծամնդաւը անոր որդւոյն՝ Դաւիթի տիրապետութեան մէջ, ինչպէս նաեւ Կեսարեան եւ Խաւատանէքը: Բայց կ'երեւի թէ Ժամանակի ընթացքին՝ փոփոխութիւններ կրած էին Արծրունիներու տրուած քաղաքները:

Հայիւ Դուկասի հաճութիւնը ստացած, Գաղիկ Արասեան, 1064ի Նոյեմբեր ամսուն, թողլով Կարս քաղաքը, Հայաստանի հիւսիս-արեւելքէն մէկը, եկաւ բռնակեցաւ Ծամնդաւ զգեստին մէջ, ոչ իրրեւ թագաւոր, այլ իրրեւ իշխան մը: Իրրեւ թագաւոր, այլ իրրեւ իշխան մը: Նոյնպէս համանուն երկու թագաւորներ, Գաղիկ Արասեան եւ Գաղիկ Արասեան, ինչպէս նաեւ Ասոմ Սենեքերիմեան, եւ անոր եղբայրը Արու Սահլ՝ իրրեւ մէկ-մէկ հասարակ իշխաններ թափառական կը շրջէին յունական աշխարհի զանազան տեղերը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԻՅՐ ԱՅՐԻ ԿԻՆ ՄԸ

Այսպէս, հայկական հողին վրայ սուրհի պէս բուսած երկու հայ թագաւորներ, տոհմային փառասիրութեան ծնունդ, սուրհի պէս ալ մայր հողէն սրբուեցան, լուրջ Սելճուքեան թուրքերու ազդած վախէն: Կարսի թագաւորութեան ջնջումով, Հայաստան մնաց բոլորովին առանց թագաւորի, առանց ազդային բանակի, անպաշտպան, զերի եւ կալանատէր ու անպաշտպան, զերի եւ կալանատէր, իրրեւ սղաւոր այլի կին մը. «Նստաւ ի սուգ այնուհետեւ աշխարհին Հայաստանայց, ձեռն ի ձեռնի, յարստաւու համակեալ. կողոպտեալ յամենայն գարդուց, եւ ի սպառ անշխալ յերեսաց

սրոյ եւ գերութեան, յերեսաց հարուածոց եւ աւերութեան, յերեսաց անողորմութեան քշմամեաց եւ դաւանութեան ընտանեաց»⁵⁶:

Նոյն որդիական զորովով համակուած է Մ. Ուսայեցին զէպի հայրենի աշխարհը, որուն չէն բարդաւած վիճակը բաղդատելով քարուքանդ եւ թշուառ վիճակին հետ, իր վրայ խորապէս ազդեր էր: Յետ ըսելու թէ իր աղնուականներուն հետ Գաղիկ հայրենի տունը թողլով, Կարսը, զնաց հոռոմներու մօտ, այրած սրտով կը յարէ զառնացած Գաղիկ Արասեանի մասին. «Այսպիսի նմանութեամբ գերեջաւ տունն Հայոց, եւ արեամբ լցաւ առհասարակ աշխարհն ամենայն, որ եւ իրբեւ զծով ծփայր ծայրէ ի ծայր, եւ քաղկեալ ապականեցան հայրենական տունն մեր լեալ, խախտեցաւ հիմն բնակութեան Հայաստան ազգացս, զի ոչ մնաց տեղի յուսոյ ապաւինի, եւ եղաք մատնեալ ի ծառայութիւն ազգաց անօրինաց եւ օտար գազանաց. ահա եկեալ կատարեցաւ ի վերայ մեր բան Գաղիկ մարգարէին որ ասէր. Վանանցէք գծողովուրդս քն առանց գնոյ, եւ ոչ գոյ քիւ աղապակի մերոյ»⁵⁷:

Ա. Լաստիվեցոյն, որ այդ դարու շրջանին Հայաստանի վրայ տեղացած ազգանքը աչքով տեսած, եւ իր մորթին վրայ անոնց փորձն առած, իր զրութեան մէջ անդադար լացեր եւ անմիթաբողբացեր էր, երբեմն Հայոց աշխարհը, երբեմն հայ ազգը, կարծես այլեւս արցունք չունէր թափելու Անի քաղաքին վրայ, զոր, ինչպէս ակնարկեցինք, խիստ կերպով կը դատէ եւ լուրթեամբ կ'անցնէր Կարսի թագաւորութեան ջնջումին վրայէն:

ԽԱՉԻԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀԸ

Խաչիկ Բ. կաթողիկոսը, որ երեք տարեկէ ի վեր կ'ապրէր Թաւարբուրի անշուք հայրապետանոցին մէջ, ուր կը շարունակէր ապրիլ իր վատակիր կեանքը, կայ-

53 Սմբատ գունտ. էջ 78:

56 Չամչեան, Պատմ. Բ. 984:

57 Մ. Ուս. Բ. 181:

53 Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 29:
54 Վարդան, Պատմ. 102:

սերական կասկածոտ ճնշման տակ, ան չէր կրնար անշուշտ ազատ գործիչ մը ըլլալ, գոնէ տարին անգամ մը չիման մէջ մտնել իր հեռաւոր հօտին հետ, որ յուսնական եւ թրքական սուրին մէջ առնուած, կ'ողորէր իր չար բախտին դէմ: Իրեն համար սրտի մեծ կսկիծ մըն էր թըշուառութեան մէջ յիշել փառքի օրերը, զոր տեսեր էր Անի քաղաքին թաղաւորակերպ հայրապետանոցին մէջ, որուն վրայ է իր մօրեղբոր թաղաւորավայել ուղեկցութիւնը դէպի Բիւզանդիոն: Այս կսկիծը շեշտելու համար, Մ. Ուռհայեցին կը գրէր՝ թէ «գայն ամենայն ածէր գմտաւ Տէր Խաչիկ եւ տեսանէր ի տառապանս գիայրապետական աքսոն Հայոց, եւ կայր յոյժ վիրաւորեալ»⁵⁸:

Այժմ Պետրոս կաթողիկոսի յաջորդին փոխադրուած էր հեռուէն իմանալ իր ցանուցիւր, տառապող եւ քարոզչական հօտին վրայ տեղացող արկածներ եւ տաղնապներ, առանց կարենալու թեթեւ մեղմացում մը առաջ բերել: Անկասկած Անիի աւերումէն վերջն է որ Մ. Ուռհայեցին կը գրէր՝ թէ «սուգ առնէր ի սրտի իւրում տէր Խաչիկս, յիշեալ գաւերումն հայրապետական աքսոն յառն Հայոց, նա եւ գլխափանել աքսոն թագաւորութեանն յագգէն Բագրատունեաց»⁵⁹: Ասով պատմիչը ըսել կ'ուզէ թէ հայրապետը մէկ կողմէ կ'ողորար Բաղրատունեաց մայրաքաղաքին կործանումը, եւ միւս կողմէ Հայոց չքնու հայրապետանոցին ջնջումը:

Բնական էր որ այսքան ցաւեր եւ տառապանքներ փութացնէին Խաչիկ կաթողիկոսի մահը, որ տեղի ունեցած է 1065 թուի ամառուան վերջերը, վեց տարի կաթողիկոսութիւն ընելէ ետք: Իրմով կը վերջանար ազգակցական տուն մը, որ հայրապետական աթոռին տուեր էր ետեւէ ետեւ չորս կաթողիկոսներ, ամէնքն ալ իրարու ազգական, որով ազգին մէջ

կաթողիկոսական տուն կազմեր էին, զոր Շնորհալին «տունն Պետրոսեան»⁶⁰ կը կոչէ, վերջին երկարակեացին անունէն առնելով:

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Պետրոս Գևորգարձի մեծադոյն արժանիքն եղեր էր, ինչպէս տեսանք, կանխահող զուշուշութիւնը, իրեն յաջորդ ընտրել իր քեռորդին, ի վերջոյ անդրադարձած ըլլալով իր յունամուլ քաղաքականութեան առած վտանգաւոր ընթացքը: Իր քեռորդին, Խաչիկ կաթողիկոսը, օտար հողի վրայ պանդուխտ, պէտք էր աւելի հեռատես եւ շրջահայեաց ըլլալ, իր կենդանութեան աթոռակից կաթողիկոս մը օծել, որ նովին իսկ զործով իր մահէն ետքը աթոռին յաջորդ հռչակուէր, քանի որ կը գտնուէր դէմ առ դէմ կայսրի մը, որ ինչպէս կ'ըսէ Մ. Ուռհայեցին, իր իշխանութեան առաջին օրէն «խորհեցաւ խորհուրդ չար, եւ կամեցաւ բառնալ եւ խափանել գաթոռ հայրապետութեան սրբոյն Գրիգորի ի տանէն հայոց»⁶¹:

Բայց Խաչիկին պակաս էր այդ հեռատես իմաստութիւնը, որով Կոստանդին Ժ. Դուկաս կայսրը, բարեգէտ առիթ նրկատեց հայրապետական աթոռին թափուր վիճակը, եւ հրաման հանեց որ նոր ընտրութիւն չկատարուի, մտքին մէջ ունենալով «Քաղկեդոնական» դաւանութիւնը Հայոց ընդունիլ տալու պայմանը: Անշուշտ, պայմանը՝ միացած էր նախապէս Խաչիկ կաթողիկոսի առաջարկուած հարկ վճարելու կամ յունաց պատրիարքութեան հպատակելու առաջարկին հետ, եւ պէտք էր որ ասոնք զործադրուէին, որպէսզի կայսրը հաճէր կաթողիկոսական նոր ընտրութիւն չնորհել: Այս նպատակին կը ծառայէր հայրապետական աթոռին թափուր մնալը, որով հայերը կը մնային անառաջնորդ ու անտէր, հոռո-

մութեան դառնալու սպառնալիքին տակ, ինչպէս յայտնի կերպով կը գրէ Ն. Շնորհալին ըսելով. «Հայոց հովուացն վախճանեալ, տունն Պետրոսեան ի բաց բարձեալ, որով յունաց ընդ մեզ գնալեալ, այլում լինել թոյլ ոչ տուեալ, զի անտէրունչ ասեմ եղեալ, լիցին ի կրօնս մեր դարձեալ»⁶²:

Կայսերական արդեւքին դժուարութիւն չպատահեցաւ, վասն զի հայոց բոլոր թաղաւորական իշխանները Փոքր Հայքի

մէջ փոխադրեալ, կայսերական անմիջական իշխանութեան ներքեւ կը գտնուէին: Հայրապետական աթոռը տարի մը պարապ մնաց, մինչեւ որ անոր վրայ բաղմեցաւ աւելի փառաւոր եւ սրբակեաց տուն մը, ազգային զոյնով եւ հռչակով յար եւ նման Լուսաւորչի տան, տալով Հայոց աննման հայրապետներ, ինչպէս տուեր էր Գրիգորեան տունը:

(Շարունակելի)

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ

62 Ն. Շնորհ. Վիպ. 544:

ԵՄ ԵՄ ԲԵՐ

Ծաղիկներուն, գոհարներուն, մետաղներուն
Ունէր գաղտնիքն աստուածագեղ եւ անսահման,
Եւ հսկումի ժամերուն մէջ գիշերական՝
Կը կազմէին վառ ծիածանն անոր հոգւոյն

Ծիրանի վաճը, շափուղան եւ ջինջ ոսկին՝
Որոնք եղան տառեր եւ մեր յանդիմանեան
Շրջեղորէն անմահ խորհուրդը հիւսեցին,
Եւ դարերով քարին վրայ քանդակուեցան:

Ու տեսաւ մագաղաթին վրայ խնկարոյր.
Աստեղավառ եւ թռչնահոյլ եւ ոսկեթել:
Գիտեմք որ սուրբը շիրիմէն այսուհետեւ

Պիտի հսկէ իր գրքիչով լուսափետուր
Ըստեղծուած կախարդանքին հրաշքուն
Ծաղիկներուն, գոհարներուն, մետաղներուն:

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ

58 Մ. Ուռհ. Բ. 185:

59 Մ. Ուռհ. Բ. 184:

60 Ն. Շնորհալի, Վիպասանութիւն, 544

61 Մ. Ուռհ. Բ. 164: